# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N *34* *11 հոկտեմբերի 2011թ.*

### ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՔՆԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

ՈՐՈՇՈւՄ Է՝

Հաստատել համայնքի 2011թ. բյուջեի եկամտային և ծախսային մասի հոդվածներում կատարված հետևյալ փոփոխությունները

1. Կապված անասնաբուժական ծառայության ֆինանսավորման նոր փոփոխության հետ, պակասեցնել 2011թ. համայնքային բյուջեի եկամտային մասը 60,0 հազ դրամ, միաժամանակ, պակասեցնել համայնքային բյուջեի ՀՀ Կառավարության կողմից համայնքներին տրվող պատվիրակված ծառայություններ բաժնի, անասնաբուժական ծառայության եկամտային պլանը 60,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 300,0 հազ. դրամ, իսկ պատվիրակված ծառայությունների ընդհանուր պլանը սահմանել 9293,7 հազ. դրամ, որից՝

-ՄԾՏԲ ծառայությանը - 6468,5 հազ. դրամ
-ՔԿԱԳ ծառայությանը - 2525,2 հազ. դրամ
-Անասնաբուժական ծառայությանը - 300,0 հազ. դրամ
Ընդամենը՝ - 9293,7 հազ. դրամ

Սահմանել բյուջեի եկամուտների պլանը 369561,7 հազ. դրամ:

Պակասեցնել նաև բյուջեի 0421.51 <<Գյուղատնտեսություն>> ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 60,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 300,0 հազ. դրամ, իսկ համայնքային բյուջեի ծախսային պլանը սահմանել 369561,7 հազ. դրամ:

2. Պակասեցնել համայնքային բյուջեի՝

2.1. 0451.51 <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 5113 <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածը 816,6 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 84689,2 հազ. դրամ:

2.2. նույն ծրագրի 5134 << Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածը 200,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 800,0 հազ. դրամ:
Սահմանել վերոհիշյալ ծրագրի ծախսային պլանը 85489,2 հազ. դրամ:
2.3. 0451.59 <<Փողոցների պահպանում և շահագործում>> ծրագրի 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածը 100,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս պլանը 200,0 հազ. դրամ, իսկ ծախսային պլանը 21620,3 հազ. դրամ:
2.4. 0961.52 << Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություն>> ծրագրի 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածը 20,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս պլանը 440.0 հազ. դրամ:
2.5. 0111.51 <<Կառավարման ապարատի պահպանում>> ծրագրի 4822 <<Այլ հարկեր>> հոդվածը՝ 400.0 հազ. դրամ:
Սահմանել ծրագրի ծախսային պլանը 44892,0 հազ. դրամ:
2.6. 0161.51 <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> ծրագրի 4235 << Կառավարչական ծառայություններ>> հոդվածը՝ 500,0 հազ. դրամ:
Սահմանել ծրագրի ծախսային պլանը 1000.0 հազ. դրամ:

3. Ավելացնել՝

3.1. 0981.51 <<Կրթություն>> /այլ դասերին չպատկանող/ ծրագրի 5112 <<Շենքների և շինությունների կառուցում>> հոդվածը 860,0 հազ. դրամ;
3.2. նույն ծրագրի 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածը 50,0 հազ. դրամ:
3.3. նույն ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 60.0 հազ. դրամ:
Սահմանել ծրագրի ծախսային պլանը 970.0 հազ. դրամ:
3.4. 0922.51 <<Հանրակրթական ուսուցում>> ծրագրի 5122 <<Վարչական սարքավորումներ>> հոդվածը 226.6 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 526.6 հազ. դրամ:
3.5. 0932.51 <<Միջին մասնագիտական կրթություն>> ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածը 140.0 հազ. դրամ՝ սահմանելով հոդվածի և ծրագրի ծախսային պլանը 440,0 հազ. դրամ:
3.6. 1071.54 <<Սոցիալապես անապահով անձանց աջակցություն>> ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածը 200,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 4645,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 5445,0 հազ. դրամ;
3.7. 0861.5 << Հանգիստ, մշակույթ և կրոն>> ծրագրի 4269 <<Հատուկ նպատակային նյութեր>> հոդվածը 500.0 հազ. դրամ:
Սահմանել վերջինիս ծախսային պլանը 2600.0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը՝ 5569.0 հազ. դրամ:
4. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույց:

Կողմ՝ 10

***Ավագանու անդամներ՝***

1. Արթուր Ալեքսանյան
2. Արազի Գևորգյան
3. Հենրիկ Գևորգյան
4. Յուրիկ Գևորգյան
5. Կարեն Իսկանդարյան
6. Վարդան Կարապետյան

7. Մուշեղ Հակոբյան ____________ կողմ

8. Տիգրան Հարությունյան ____________ կողմ

9. Խաչիկ Մնացականյան ____________ կողմ

10. Ռոբերտ Նավասարդյան ____________ կողմ

11. Իլյիչ Շադյան ____________ կողմ

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N *35* *11 նոյեմբերի 2011թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում կատարել փոփոխություն՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած Արտակ Ջիրոյանին ազատել հանձնաժողովների անդամի պարտականություններից:
2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկել ավագանու անդամ Արազի Գևորգյանին:

Կողմ՝ 10

***Ավագանու անդամներ՝***

1. Արթուր Ալեքսանյան
2. Արազի Գևորգյան
3. Հենրիկ Գևորգյան
4. Յուրիկ Գևորգյան
5. Կարեն Իսկանդարյան
6. Վարդան Կարապետյան

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Մուշեղ | Հակոբյան | կողմ |
| 8. | Տիգրան | Հարությունյան | կողմ |
| 9. | Խաչիկ | Մնացականյան | կողմ |
| 10. | Ռոբերտ | Նավասարդյան | կողմ |
| 11. | Իլիչ | Շաղյան | կողմ |

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

N *36*   *11 հոկտեմբերի 2011թ.*

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 57 ՇԵՆՔԻ 5-ՐԴ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԹԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 և 32-րդ հոդվածի 12, 13 կետերով.

ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Կատարել պետական գրանցում ք. Արարատ, Շահումյան 57 շենք բնակարան 5 հասցեն կրող բնակարանի նկատմամբ, որպես Արարատի քաղաքային համայնքի սեփականություն՝ առանձին գույքային միավոր:
2. Ք. Արարատ Շահումյան 57 շենք բնակարան 5 հասցեն կրող բնակարանը նվիրել այդ բնակարանում 1978թ-ից բնակվող Թինա Գեորգիի Օգանեզովային, ծնված 1951թ.:

Կողմ՝ 10

*Ավագանու անդամներ՝*

1. Արթուր Ալեքսանյան ____________ կողմ
2. Արազի Գևորգյան ____________ կողմ
3. Հենրիկ Գևորգյան ____________ կողմ
4. Յուրիկ Գևորգյան ____________ կողմ
5. Կարեն Իսկանդարյան ____________ կողմ
6. Վարդան Կարապետյան ____________ —

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Մուշեղ | Հակոբյան | կողմ |
| 8. | Տիգրան | Հարությունյան | կողմ |
| 9. | Խաչիկ | Մնացականյան | կողմ |
| 10. | Ռոբերտ | Նավասարդյան | կողմ |
| 11. | Իլյիչ | Շաղյան | կողմ |

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ